խումն չկարացի ձեռք բերել հնութիւնք, ձեռագրեր, մատեանք, դրամք եւայլն . . . և ոչ կաթուղիկոսաց կոնդակներ պատմութեան նպաստող. ուստի և իմ՝ Ջամախուց թեմին Առաջնորդ նշանակուելու՝ կոնդակը արտապրեցի այստեղ՝ տուած Մակար կաթուղիկոսից, ի 20 յունիսի 1887 ամի № 341, որ է բան այսմ.

ԿՆՔԻՆ

Մակար ծառայ Քրիստոսի եւ անհատանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի. **զՔրիստոսասէրն կենսաձիր սուրբ ոգւոյն հանդերձ տեսողեղ օրհնութեամբք ամենաբեւական շնորհաց սուրբ Հոգւոյն նուիրեմք յԱռաքելական Աթոռոյ աստի Ձեզ ա-մենեցուն՝ որ բնակեալքդ էք ի Տիրախնամ վիճակին Հայոց Շամախւոյ և յամենայն քաղաքս և ի գիւղօրայս գորին՝ շնորհունակ վարդապետաց և վանահարց, բարեկրօն քահանայից, սարկաւագաց և կղերիկոսաց, պատուամեծար ազնուականաց, բարեջան հոգաբարձուաց երկսեռից դպրոցաց, պատուելի վաճառականաց, հաւատարիմ գանձապետաց մերոց և երիցփոխանաց սրբոց եկեղեցեաց, բազմահմուտ արուեստաւորաց, վաստակասէր երկրագործաց և համօրէն ուխտի մանկանց եկեղեցւոյ՝ արանց և կանանց, ծերոց և տղայոց և ամենայն չափու հասակի հաւատով ի Քրիստոս զարգացելոց՝ հոգեւոր որդւոց մերոց սիրեցելոց—***

---

5 — Զոհ ժանտախտին հասարակաց
Եւ սա զնաց տարաժամ,
6 — Ցորում հազար եւ ութ հարիւր՝
Ինսնսուն երկուսն էր թիւ, ամ:

Ի 20 յուլիսի 1892։